

«ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

17.05.2016 15:16



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական խորհրդատվություն**» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի **հունիս ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ**:

Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1),**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2),**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3):**

Բաղադրիչ 1.

Հունիս ամսվա ընթացքում Արմավիրի և Արագածոտնի մարզեր այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Արմավիրի և Արագածոտնի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար (**2-րդ և 3-րդ խմբեր**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական ուղղվածությամբ փաստաբանները Երևանից, Արմավիրի և Արագածոտնի մարզերից:**

Բաղադրիչ 2.

Հունիս ամսվա ընթացքում «Արմավիր» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներ այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Արմավիրի և Արագածոտնի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար (**2-րդ և 3-րդ խմբեր**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական ուղղվածությամբ փաստաբանները Երևանից, Արմավիրի և Արագածոտնի մարզերից:**

Բաղադրիչ 3.

Հունիս ամսվա ընթացքում վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար (**2-րդ խումբ**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական ուղղվածությամբ փաստաբանները:**

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով Ձեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով info@advocates.am կամ lyudvik.davtyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չչ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը և մարզը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:

Ծրագրի մայիս ամսվա փուլին դիմած, բայց ծրագրում չընդգրկված փաստաբանները սահմանափակված չեն դիմելու նաև ծրագրի հունիս ամսվա փուլին:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի մայիսի 25-ը:

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են ծրագրում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

Ծրագրի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

Հեռ.՝ 091 066 880, 098 828 09

Էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com

Առաջարկվող նորություններ



19.04.2016 ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵԱՀԿ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՒՄ Է ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



14.06.2016 «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



14.07.2016 «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



13.09.2016 «ԱՆՎԾԱՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

```
վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```